ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԱՎՂՈՍ Զ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Շատ սիրելի եղբայր ի Քրիստոս,

Այն պահին, երբ Ձերդ Սրբությունը և եպիսկոպոսական դասի Ձեր եղբայրները հավաքվում են քննարկելու հայ եկեղեցու գործերը և ձեռնարկելու սրբալույս մյուռոնի օրհնության հանդիսավոր արարողությանը, Մենք ցանկանում ենք Ձերդ Սրբությանն արտահայտել Մեր սրտագին բարեմաղթություններն ի Քրիստոս և հավաստիացնել Ձեզ, որ Մեր աղոթքի մեջ կհայցենք սուրբ Հոգուց, որպեսզի Իր կենարար շնորհներն առատապես սփռի այդ կարևոր հավաքույթի վրա: Մենք ևս շատ մոտ ենք զգում Մեզ բոլոր նրանց, ովքեր Ձերդ Սրբության հետ միասին նշելու են Ձեր վաթսուներորդ տարեդարձը, և մաղթում ենք, որ Տերը լցնի Ձեզ Իր օրհնություններով և Իր օգնական ուժով:

Մենք ցանկանում ենք նույնպես, որ հայ եկեղեցու կյանքի այդ հանդիսավոր իրադարձություններին հռոմեական կաթողիկե եկեղեցու երկու ներկայացուցիչների մասնակցությունը՝ հանձինս քրիստոնյաների միության Մեր քարտուղարության քարտուղար գերապատիվ հայր Ժերոմ Համմերի և նույն քարտուղարության փոխ-քարտուղար գերապատիվ հայր Պիեռ Դյուպրեի,— հաստատուն մի նշան լինի Ձերդ Սրբության անձի նկատմամբ Մեր եղբայրական սիրո և հայ եկեղեցու նկատմամբ Մեր ունեցած հարգանքի: Հայ ժողովրդի ունեցած հավատքը Քրիստոսի հանդեպ եղել է ուժեղ ներշնչման, հավատարմության և եկեղեցու հայրերի ավանդությանը կապված մնալու մի աղբյուր՝ իր երկար պատմության վերիվայրումների ամբողջ ընթացքում:

Թող Աստված Իր մեծագործ սրբերի բարեխոսությամբ ուժեղացնի Իր սրբարար գործը այս ժողովրդի մեջ և օրհնի նրան եղբայրական սիրո և միության պարգևով բոլոր նրանց հետ, ովքեր կրում են Փրկիչ Քրիստոսի անունը:

Հոգեպես ներկա լինելով ձեր մեջ, Մենք հույս ենք հայտնում, որ Տերը մի օր Մեզ մեծապես կուրախացնի անձնապես հանդիպելու Ձերդ Սրբությանը, եթե առիթը ներկայանա Ձեզ ճանապարհվելու դեպի Հռոմ:

Վերանորոգում ենք Ձերդ Սրբության հանդեպ Մեր անկեղծ և եղբայրական սիրո զգացումներն ի Քրիստոս:

ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ

26 սեպտեմբերի 1969 թ.,
Վատիկան